

Լոռու մարզում առկա ազգային փոքրամասնություններին նվիրված պատմամշակութային հուշարձաններ, եկեղեցիներ

Քաղաք Վանաձոր՝ ռուսական եկեղեցի՝ Խաչաձև հատակագծով, կենտրոնագմբեթ: Կառուցվել է 1895թ. երկաթգծի շինաշխատանքներին զուգահեռ:

Ստեփանավանի շրջան, գյուղ Ամրակից՝ ռուսական եկեղեցի՝ փայտյա գմբեթով: Կառուցվել է 1910 թ.: 1988թ. երկրաշարժի հետևանքով մասամբ փլուզվել է, գտնվում է վթարային վիճակում:

Տաշիրի տարածաշրջան, գյուղ Պրիվոլնոյե՝ ռուսական եկեղեցի: Կառուցվել է 1875թ.: Բարվոք վիճակում է:

Ալավերդի համայնք՝ Մադան թաղամաս՝ հունական եկեղեցի: Կառուցվել է 1880-1890թ.թ.:

Նոր Խաչակապ համայնք՝ ռուսական զինվորի հուշարձան, որի հարևանությամբ է գտնվում գերեզման հուշահամալիրը: Կառուցվել է 1804թ.:

Ստեփանվանի տարածարջան, Գարգառ համայնք: Ռուս բանաստեղծ [Ալեքսանդր Պուշկինը](#) 1829 թվականին [էրզրում](#) ճանապարհորդելիս [Բազումի լեռնաշղթայի](#) արևելյան մասում՝ 2038 մ բարձրության վրա հանդիպել է ռուս գրող, դիվանագետ [Ալեքսանդր Գրիբոյեդովի](#) աճյունըսայլով [Իրանից Թբիլիսի](#) տեղափոխողներին: Հանդիպման վայրում 1930 թ. կառուցված է աղբյուր-հուշարձան: